ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

04 հունվար 2023 թվականի N 001

ՌԱԶՄԻԿ ՀՐԱՉՅԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԸՆԴԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի Ն 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ և 12-րդ կետերով, նկատի ունենալով, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Ռազմիկ Հրաչյայի Հովհաննիսյանի 2022 թականի դեկտեմբերի 22-ի դիմումը.

<u>որոշում եմ՝</u>

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղի Խաչատրյան փողոց 68 հասցեում գտնվող Ռազմիկ Հրաչյայի Հովհաննիսյանի ընդանիքին սեփականության իրավունքով պատկոնող 04-045-0017-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 9.0 քմ. արտաքին մակերեսով բնակելի տուն, 76.7քմ օժանդակ շինություններ և 2.76 քմ պարիսպ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ Արարատ Մասիսի Բազոյան Ա/Ձ-կողմից տրված հողամասի և շինության հատակագծի: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2022NV9HUJ

2. Ինքնակամ կառույցի օրինականցման համար վճարը 1 քմ. Բնակելի տան համար կազմում է 631,0 ՀՀ դրամ, ծածկոցի և օժանդակ շինությունների համար 387,6 ՀՀ դրամ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 35900 (երեսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

3. Օրինականցման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Լեռնագոգ համայնքի 900475002243 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023322250 .

ՈՐՈՇՈՒՄ

04 Հունվար 2023 թվականի N002

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐԻԿ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌԱԶՄԻԿԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԽՈՀԱՆՈՑԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ գյուղի բնակիչ Հովհաննես Ռազմիկի Իսրայելյանիը դիմել է Դալարիկ գյուղի Մ.Գորկու փողոց 9 հասցեում գտնվող 0.1302 հա մակերեսով հողամասի վրա կառուցված բնակելի տուն,խոհանոց, անասնաշենքեր,պարիսպ որոնց նկատմամբ չի պահպանվել իրավունք հաստատող փաստաթղթերը, օրինակացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել են մինչև 15.05.2001թ., դրանց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի,

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել Հովհաննես Ռազմիկի Իսրայելյանին (ծնված 01.10.1958թ.) սեփականության իրավունքը: Դալարիկ գյուղի Մ.Գորկու փողոց 9 հասցեում գտնվող 0.1302 հեկտար մակերեսով օրենսդրության խախտումներով տրամադրված հողամասի վրա 1977թ. կառուցված 324.9 քմ.բնակելի տուն, 1977թ.կառուցված 48.1 քմ.խոհանոց, 1989 թ.կառուցված 191.5քմ. անասնաշենքեր,2000թ.կառուցված 7.38քմ.պարիսպ նկատմամբ:

2. Անշարժ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմանները:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250
baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ N 03
<<05>> ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14.07.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 213 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի 14.07.2022 թվականի <<Հողատեսքի փոփոխություն կատարելու մասին>> թիվ 213 որոշումը ուժը կորցրած ճանաչել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250
baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

<<05>>ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 004

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի,Դալարիկ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Ս.Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին /կադաստրային ծածկագիր 04-036-0010-0004-001-014/ տալ << Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, գյուղ Դալարիկ, Ս. Շահումյան փողոց,12 շենք, 11 բնակարան >> հասցեն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիր մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

05 հունվար 2023 թվականի N 005-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, ՀՀ Կառավարության 2015 թվակինի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Արտակ Զեյնալյան Սամվելի 2022 թվականի հունվարի 05-ի դիմում հայտը.

որոշում եմ՝

1. Քաղաքացի Արտակ Սամվելի Զեյնալյանին տալ շինարարության թույլտվություն, Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, գ.Վանանդ հողամաս /ծածկագիր 04-089-0015-0018/ հասցեում 29,7 մ չափերի մեկ հարկանի տնտեսական շինության կառուցման աշխատանքներ կատարելու համար:
2. Արտակ Սամվելի Զեյնալյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել թիվ 2-5 ձևի տեղեկանք:
3. Արտակ Սամվելի Զեյնալյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ դիմել Բաղրամյան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար:
4. Արտակ Սամվելի Զեյնալյանը պարտավոր է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Բաղրամյան

համայնքի 900475058062 հաշվեհամարին վճարել 10000 (տաս հազար) ՀՀ դրամ տեղական վճար՝ շինարարության թույլտվություն տրամադրելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ